

ոանդի Բրնձին Անտիոքայ... և ծնալ զԹու-
բէն բրինձ...:

«Փիլիպպինէ տուաւ ի կնութիւն թէո-
զորի Ա. Լասկարեսայ կայսեր» († 1222). ասկէ
ծնալ զվարձանքի կնոստանդին. ապա զժամե-
լով կնոջ հետ «զարձոյց զնա ի Հայո» (1212°):

Թոռնիկեանց մասին անդրազոյն տեղե-
կութիւններ կը պակսին:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՄՈՂՍԷՍ Գ. ՏԵԹԵՒԵՅԻ ԿԵԹՈՂԻԿՈՍ

ԿԵՆՆԻՆ ԵՒ ԳՈՐԺՈՒՆԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՀՈՒԱՆ 300ԱՄԵԱՅ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

20. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՌՈՄԱՅ ԵԿԵՂԵՅԻՈՅՆ
ՀԵՏ

Կաթողիկոսական աթոռին էջմիածին վե-
րահաստատուելէն ետքը, առաջին անգամ
Սարմատեցի Ստեփանոս կաթողիկոսն (1543—
1551) եղաւ, որ յարարելութեան մէջ մտաւ
Հոռոմայ Քահանայապետին հետ: Իր նպա-
տակն էր միջնորդութեամբ վատիկանի շար-
ժել եւրոպական պետութիւնները, նիւթա-
կան, բարոյական և զինուորական ուժերով
օղնելու Հայոց, որպէս զի կարենան թօթափել
պարսկական ծանր լուծն և ձեռք բերել քա-
ղաքական ազատութիւն: Առ այս կարևոր
համարեցաւ կաթողիկոսը, նաև անձամբ ներ-
կայանալ Հոռոմայ Քահանայապետին և Եւրո-
պական իշխանութիւններու: Դժբախտաբար
ի դերեւ ելան մշակուած այս բոլոր ծրագիր-
ները, որովհետև Ստեփանոս Սարմատեցի
կէս ճանապարհին վախճանեցաւ ի Լեմբերգ
(Լիով) 1551ին: Իր յաջորդն Միքայէլ Աբրա-
տացի († 1574) կը շարունակէ պահպանել յա-
րարելութիւնները Ս. Աթոռին հետ. Աբգար
զպրի առաքելութիւնն ի Հոռոմոյն քաղաքա-
կան նպատակները կը հետապնդէր: Թէպէտ
գրական որ և է արդիւնը շատին այս բա-
նակցութիւնները, բայց և այնպէս թաղէս
կաթողիկոս (1583) ապրեցաւ Արեւմուտքի
հետ թղթակցութեան մէջ: Իսկ ի Հոռոմ կ'որո-

րուէր նոյն խորհուրդներով Աբգար զպրի որ-
դին Սուրբաշահ-Մարկանդոնիոյ († 1585) ¹:

Այնուհետև, երբ մանաւանդ Օսմանեանց
և Պարսից մէջ թշնամութիւնները ծայր առին
և Արեւմուտք Օսմանեան բանակը յաղթական
կը յառաջանար, աննպատակ տեսնուեցաւ ա-
զատութեան յոյսերով տարուբերուել: 1579ին
Երեւան ինկած էր Օսմանեանց ձեռքը:

Այսպէս, թէպէտ ապարդիւն մնացին ա-
զատութեան ամէն փորձերը, բայց չկարե-
ցաւ այն յոյսը, թէ Արեւմուտքէն պիտի ծագի
փրկութիւնը:

Օսմանեան տիրապետութեան տակ, բայց
յատկապէս ապստամբ բանակի արձակեցաւ ա-
նակ իշխանութեան օրերուն, աւելի անտանելի
դարձած էր կեանքը արեւելեան դաւառ-
ներու մէջ: Տանջուած, հարստահարուած,
խիստ հարկապահանջութեանէ յուսահատու-
թեան մատնուած ժողովուրդը կը փնտէր
օգնական բարեկամի մը ձեռքը: Միակ ապա-
ւէնն էր քրիստոնէայ տարրին համար Հոռոմայ
Եկեղեցւոյն Հովուապետը, որուն անունը
հռչակուած էր Արեւելք և կը վստելէր Արեւ-
մուտք բարձր ճոխութիւն:

Հոռոմի Քահանայապետները իբրև հո-
վուապետ կաթողիկէ Եկեղեցւոյ ունէին իրենց
աղբեցութեան տակ ոչ միայն քահանայապե-
տական պետութեան սահմանները, այլ և
լուսնադակ կաթողիկէ աշխարհը: Եւրոպական
պետութիւնները կը հետեւէին անոնց ակնար-
կութիւններուն, երբ մասնաւորապէս կաթո-
ղիկէ Եկեղեցւոյ շահերը համադրեցաւ կաթո-
լիկն կը պահանջէին: Այս պատճառաւ ալ երբ
առիթ ընծայուէր արեւելեաց զիմել կաթո-
ղիկէ Եկեղեցւոյ Հովուապետին՝ հայցելու
քաղաքական կամ բարոյական օգնութիւն և
պաշտպանութիւն, ուղղակի իրմէ կամ անոր
միջնորդութեամբ պետութիւններէ, առաջին
հարցումը կ'ըլլար, թէ ի՞նչպէս է անոնց վե-
րաբերմունքը հանդէպ կաթողիկէ Եկեղեցւոյ:
Արեւելեան քրիստոնէայը կը դաժնուէին տա-
կաւին կաթողիկէ Միութեանէն դուրս: Հոռոմի
մեծազոյն փափազն եղած էր միշտ Միութեան
մէջ ունենալ արեւելեան Եկեղեցիներն ալ:
Առ այս սկսեալ ժ. Գ. դարէն, բայց յատկապէս
ժ. Զ. — ժ. Է. դարերուն հիմնարկուած էին նոր
վանական հաստատութիւններ, որոնք իրենց
առաքելակները կ'ուղարկէին առաջաւոր և հե-

¹ Այս խորհրդներու մասին տե՛ս իմ գրութիւնս՝
Ազատութեան շարժումը Ժ. Ե. — ժ. Զ. դարուն Հայոց մէջ.
Հայ գէոգր. 1917/18, էջ 142—154:

աւար Արեւելք, մէկ կողմէն չմիացեալ Եկե-
ղեցիները ի միութիւն յորդորելու, միւս կող-
մէն հեթանոս ժողովուրդներու մէջ քրիստո-
նէութիւնը քարոզելու: Գրիգոր Ժ. Գ. Քահա-
նայապետ հարկ տեսաւ 1623ին հաստատել
Տարածման Հաւատոյ Ս. Ժողովը, որուն մաս-
նաւոր խնամքին յանձնուեցաւ այնուհետև
Եկեղեցիներու միութեան հոգը:

Պարսկաստանի մէջ կը դորձէին ժ. Է. դա-
րու սկիզբը Աւգոստինեանք, Բոկոսն Կարմե-
ղեանք և Կապուչինք, որոնք սերտ յարաբե-
րութեան մէջ կ'ապրէին Հայոց հետ:

Հայոց Հոռոմի Եկեղեցւոյ հետ Միութեան
հարցը լուրջ խորհրդածութեան առարկայ
եղած էր արդէն Փրոքենտեան ժողովի մէջ
(1439): Հայոց կաթողիկոսի պատգամաւոր-
ները ունեցած էին բանակցութիւն Եւզինիոս
Գ. ի հետ և կնքած Համաձայնութեան սահ-
մանադրութիւն մը: Այս Համաձայնագիրը
այնուհետև յաճախ կը ներկայացուէր Հայոց,
ամէն անգամ որ խօսք կ'ըլլար Միութեան
մասին:

Միութեան հարցը նոր բանակցութեանց
առարկայ եղաւ մասնաւորապէս ժ. Զ. դարու
վերջին և ժ. Է. դարու առաջին կէսին: 1585ին
Միգոնի արքեպիսկոպոսը անձամբ ներկայա-
ցած էր Սիւս, բանակցելու Ազարիա կաթողի-
կոսին հետ ²: Ժ. Է. դարու սկիզբը Միութեան
խնդրով ուղևորուած էին Յովհաննէս Խուլ և
Զաքարիա Վանեցի, Կ. Պոլսոյ պատրիարք-
ները: 1624 Դեկտ. 10ին Տարածման Հաւա-
տոյ Ս. Ժողովը նոյն հարցով դիմած էր Երու-
սաղէմի Հայոց Գրիգոր Պարոնտէր պատրիար-
քին ³: Բարեկամական յարաբերութեան մէջ
էր Հոռոմի հետ Տիգրանակերտի արքեպիսկո-
պոսը Յովհաննէս Ուռայեցի: Այս շարժման
դէմ կանգնեցաւ Գրիգոր Կեսարացի, Կ. Պոլ-
սոյ պատրիարքը († 1635):

Որչափ ալ պանագան էին տրամադրու-
թիւնները աղբայնոց քով, բայց և այնպէս
Ազգին քաղաքական և անտեսական պայման-
ները կը ստիպէին Ազգին առաջնորդները ու-
նենալ Արեւմուտքի հետ բարեկամական կապ:
Մասնաւորապէս Արեւմուտքի հետ ստեւարա-
կան յարաբերութեան մէջ ապրող հայ վաճա-

² Հմմտ. Հ. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթո-
ղիկէ վարդապետութեան ի Հայո. Վիեննա 1878, էջ
159—160 և 302—313:

³ Propaganda, Lettere volgari della S. Congrega-
zione, vol. 3, f. 206. Հմմտ. և G. Hofmann, Grie-
chische Patriarchen und römische Päpste. Roma
1933, S. 8—9. Orientalia Christiana, vol. 30, 1,
(1933).

աւանները — յանուանէ Զուղայեցիները,
որոնք անհրաժեշտ կը տեսնէին արեւելեան և
արեւմտեան նաւահանգիստներու մէջ յենա-
րաններ ունենալ քահանայապետական հովա-
նաւորութեան տակ:

Ինչպէս կ'երևայ, անոնց դրդումներու
վրայ դիմեց Մելքիսեդեկ կաթողիկոս 1602ին
Կղեմէս Բ. Քահանայապետին, խնդրելու ա-
նոր պաշտպանութիւնը ի նպաստ հայ ժողո-
վրդեան և վաճառականներու: Թղթատարն է
Յովհաննէս Ղոփուզեցի, Տերղնոյ եպիսկո-
պոսը. սա, որ յայտնի անձնաւորութիւն մըն
էր Հոռոմ, կ'երևայ թէ ուղևորած էր Երե-
ւան-Զուղայ. և հոն ծանօթացած Կաթողի-
կոսին: Մելքիսեդեկի թուղթը չունիմ առ
ձեռն. անոր բովանդակութեան ամփոփումը
տուած է Կղեմէս Բ. իւր առ Փիլիպպոս թա-
ղաւորն Սպանիոյ գրած հետեւեալ գրութեան
մէջ, զոր թարգմանաբար կը ներկայացնեմ:

Թովղթ. ԿՂԵՄԵՍ Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԱՌ ՓԻԼԻՊՊՈՍ
ԹԱԳԱՌՈՐՆ ՍՊԱՆԻԱՅ
(վատիկանեան Դիւան, Arch. ԽԳ, հատր 46, Թ. 281,
էջ 264:)

Մերելի որդւոյ մերում ի Քրիստոս փի-
լիպպեայ կաթողիկեայ թաղաւորին Սպա-
նիացւոյ Կղեմէս Բ. Քահանայապետ:

Մերելի որդի մեր ի Քրիստոս, ողջոյն և
առաքելական օրհնութիւն:

Յովհաննէս Ղոփուզեցի, մեծարեալ ար-
քեպիսկոպոսն Տերղնոյ Հայոց, որ ղթուղթս
մեր զայս կաթողիկէ Մեծութեան Զերում ա-
ռաջի առնէ, յառաջ քան դաւուրս ինչ եկն ի
սուրբ սեամս դիտոյն առաքելոց, առաքեալ առ
մեզ ի մեծարոյ եղբօրէ Մելքիսեդեկի՝ ի դիւա-
ւոր առաջնորդէ Հայոց, որ կաթողիկոսն և
հոյրապետ անուանեալ յորձորջի. զորոյ
ղթուղթն ընկալաք գառաքեալն ի ձեռն նորին
Յովհաննու: Ի թղթիս յայմիկ ճանաչէ նոյն
Մելքիսեդեկ զբարձրագոյն իշխանութիւն այսր
որոյ առաքելական Աթոռոյ, յորում մենք
բաղմիմք դահերէց առանց արժանեաց. և
խոստանայ զնորին մեծութեան և ճոխութեան
երթալ զհետ:

Ի նոյն յարեալ պատմէ մի ըստ միջնէ և
դիւրեական հանգամանոց և զբաղմաղթի
տառապանաց այնր բովանդակ ժողովրդեան,
որ ընդ երկաթեղէն լծով անհնարին բռնու-
թեան թուրքաց հարստահարի և ի դառնա-
գոյն կապանս անկեալ հեծէ:
Խնդրէ արդ ի մէնջ աղերսանօք և՛ և յիւր

Եւ յամենայն եպիսկոպոսաց եւ կղերիկոսաց
 եւ ի համօրէն հաւատացելոց այնր ժողո-
 վրդեան յանուն, զի զՀայս եւ յականէ յա-
 նուանէ զվաճառականս Մեծութեան Ձերում
 մտաղիւր յանձն առնիցեմք եւ ի մերմէ կուսէ
 ըստ պատշաճից բանս զնոցին զայլելայլ իրաց
 բազում հաւաստեալ առաջի քո արկանիցեմք.
 այս ինքն խնդրի բազում թախանձանօք, զի
 քրիստոնեայ եւ կաթողիկէ Հայք եւ որք յա-
 նուն կաթողիկէ Եկեղեցւոյ ընդ հնազանդու-
 թեամբ հռովմէական քահանայապետի՝ որ է
 Հայր համօրէն քրիստոնէից, կեան եւ խոստա-
 նան օգնութեամբն Աստուծոյ կեալ, թէպէտ եւ
 ի քո կաթողիկէ անունն են ամենեւին յանձն եւ
 ապաստան, այլ պաշտօնեայք քո որ յԱրեւելս
 ընդ նոսա որպէս ընդ անհաւատս զնան եւ առ
 անհաւատս ունին զնոսա. զի յանունն շա-
 հաստանի անդ յՈրմուտ (իմա Ormus), որ ի
 Պարսից ծոցին կայ, յորում յայլոց քրիստո-
 նեայ վաճառականաց վասն տուրեւտիկ վա-
 ճառաց մտիցն եւ ելիցն՝ ի սակ տասա-
 նորդք միայն պահանջին, ի նոցունց Հայոց
 նոյն սակ կրկին չափով որպէս յանհաւատիցն
 պահանջի, ի մեծ վնաս նոցին եւ իրաց եւ
 համբաւոյ. թէպէտ եւ յամենայն նահանգս եւ
 յաշխարհս քրիստոնեայ թագաւորաց եւ իշ-
 խանաց, որպէս եւ առ մեզ իսկ ի մերում նա-
 լահանգստին Անկոնայ նոքին ընդ այլ քրիստո-
 նեայս ի նմին հաւասար իրաւունս վայելիցին:

Առաջի առնեն մեծաւ աղերսիւ եւ զայն զի
 նոքին առանց ինչ յանձանց պատճառս տալոյ
 ի պաշտօնէից մեծութեան քոյ յարեւելեան
 վաճառականութենէ արտաքս վարիցին, եւ
 յոգսք անկեալ աղաչեն բազում թախանձանօք,
 զի այն իրաւունք քոյով հրամանան չնոր-
 հեացի նոցա միւսանդամ:

Այս իսկ ազագաւ դայ առ մեծութիւնդ
 քո մեծարոյ արքեպիսկոպոսն Տերգնոյ Յով-
 հաննէս, յորմէ զամենայն յորդագոյնս եւ յա-
 ճարագոյնս իմացիս: Եւ նա ոչ առանց ինչ
 արժանեաց ի մերմէ առանձին պաշտպանու-
 թենէ թիկունս օգնականութեան գտեալ՝ յու-
 սայ զոր ինդրէն գտանել ի քումմէ բարերա-
 րութենէ:

Իսկ մեք, որպէս եւ հովուական խնամք
 մեր պահանջեն, զքրիստոնեայ Հայս եւ զայ-
 նոսիկ, որ առ վէմն հաւատոյ որպէս զկաթո-
 ղիկեայս ընթացեալ իցին ընդունիմք Հայրա-
 կան զթով եւ ցանկամք ամենայն հաւաստեօք
 սիրոյ յօղել զնոսա անդէն ի միութիւն մեծին
 Եկեղեցւոյ. զնոյն ինամս եւ ի քո մեծութենէ

գտանել վասն քոյոյ բարեպաշտութեան եւ
 հանապազօրեայ եռանդանն, որ առ ի տարա-
 ծունն կաթողիկէ հաւատոյ, ոչինչ կասկա-
 ծիմք:

Եւ արդ, սիրելի որդի ի Բրիտանս, ի Քեյ
 յանձն առնեմք յամենայն սրտէ զհայ Ազգն եւ
 զհայ վաճառականս եւ ի վեր քան զամենայն
 զայնոսիկ, որ ի Ջուզայեցւոց քաղաքէ անտի
 են, զորոց ասեն եթէ մեծաւ հոգաբարձու-
 թեամբ ի տուրեւտիկ շահան պարապիցին.
 եւ դարձեալ եթէ, որպէս լսեմքս, ողորմու-
 թեան զործովք իւրեանց զեպիսկոպոսաց եւ
 զայլոց կառօտութիւնսն թեթեւազոյնս զոր-
 ծիցեն:

Լիցի եւ մեզ հաճոյ, եթէ զարքեպիսկո-
 պոսս զայս զՅովհաննէս եւ ի մերոց զիմաց
 մտաղիւրս տեսցես եւ զիւրն Հայոց յաջողու-
 թեամբ իմն եւ ըստ մտաց առաքողին շնորհիւ
 քով, որչափ ինչ հնար իցէ, եւ բարեացակամ
 կամօք ի զլուսի հանիցես: Զի է այս ընդու-
 նելի Աստուծոյ եւ մեծութեան Ձերում ի պա-
 տիւ եւ ի վառս. զի քրիստոնեայք որ ի հե-
 ոագոյն կողմանս բնակիցին եւ որ ի թշնամեաց
 խաչին Բրիտանոսի ընդ ծանու ստրկութեամբ
 տաղնապիցին, քոյովք արդահատանօք, քոյով
 թագաւորական սրտի մեծութեամբ զուար-
 թացեալ զուարճացին:

Տուեալ ի Հոռոմ առ սուրբ Առաքեալսն ընդ
 մատանեալ ձկնորսի, յաւուր ԺԳ. Սեպտեմ-
 բերի 1602. ի քահանայապետութեան մերոյ
 ԺԱ. ամի:

Հայ վաճառականներու խնդիրը նաեւ յե-
 սոյ բանակցութեան նիւթ դարձաւ:

Հայաստանի քաղաքական պայմանները
 նոր կերպարանք առին այնուհետեւ: 1603ին
 Շահ Աբաս անհամար բանակով քաղց զէպի
 Թաւրիզ—Նախիջևան—Երեւան: Նոյն տար-
 ւոյն Նոյեմբերին պաշարման ենթարկուեցաւ
 Երեւան եւ յետ ութամսեայ պաշարման՝ 1604
 Յունիսին գրաւուեցաւ Պարսիկներէն: Տա-
 կաւին պաշարման մէջ էր, երբ անցաւ անկէ
 Տեկանդեր (Tekander) Գերմանիոյ Կայսեր
 տեղակալ դեսպանը. այս առթիւ հանդիպելով
 էջմիածին, տեսակցութիւն ունեցաւ (Դաւիթ)
 կաթողիկոսին հետ: Կաթողիկոսը, որ գիտէր
 թէ մօտալուս է Երեւանի անկումը, կը խըն-
 դրէր դեսպանին միջնորդութիւնը Շահին քով,
 «որպէս զի հաճի թոյլ տալ Հայոց պահպանել
 կրօնի, քրիստոնէութեան եւ այլ հինաւուրց
 ազատութիւնները. եւ ամէնը, ինչ որ զրա-

ւած էին իրենցմէ թուրքերը, վերադարձուին
 իրենց»⁴: Իրերը ուրիշ կերպարանք առին
 սակայն: Նոյն 1604 տարւոյն իմանալով Շահ
 Աբաս, թէ Օսմանեան ասեղ բանակ մը Ջիբա-
 լայ փաշայի առաջնորդութեան տակ կը քալէ
 իր վրայ, կ'որոշէ Այրարատեան դաշտը
 մինչեւ Թաւրիզ դատարկել, բնակչութիւնը
 բռնի տեղահանել եւ փոխադրել Պարսկաստան:
 1604 Նոյեմբեր—Դեկտեմբեր ամիսներուն, երբ
 ձմեռը սաստկացած էր Այրարատեան դաշտին
 վրայ, հայ բնակչութիւնը կը տեղահանուի:
 Անոնց թուին մէջ էին նաեւ Դաւիթ եւ Մելքի-
 սեղեկ կաթողիկոսները: Յաջորդ տարին կը
 դատարկուի նաեւ Հին Ջուզան, այս բարեկե-
 ցիկ քաղաքը, եւ բնակչութիւնը կը տեղափո-
 խուի Սպահան, ուր քաղաքի արուարձանին
 մէջ ցոյց կը տրուի իրենց նոր բնակավայր,
 զոր կ'անուանեն Նոր Ջուզայ:

Պարսկաստանէն, ուր տեղահանուած հայ
 ժողովրդեան պայմանները շատ ծանր էին, կը
 դիմէ Դաւիթ կաթողիկոս Պօղոս Ե. Քահա-
 նայապետին, հայցելու անոր պաշտպանու-
 թիւնն եւ միջնորդութիւնը Շահին քով (1605):
 Այս թղթակցութեան մասին կը գրէ Վարդան
 Յունանեան. «Դաւիթ կաթողիկոս էջմիածնի
 յամի Տեառն Ռոմին եւ ի թիլին Հայոց ՌԾԴին
 դրեաց առ փափն Պօղոս Ե. զղաւանդութիւն
 Կաթողիկէի հաւատոյ, ստորագրութեամբ
 իւրով եւ այլոց վեցից եպիսկոպոսաց. որոյ
 զօրինակն ունիմ ի գրատան իմում» (Տաշեան,
 Յուցակ Մխիթ. Մատենադարանի, էջ 111):

Հաւանօրէն տարբեր է սակէ այն թուղթը
 զոր գրեց Դաւիթ կաթողիկոս 1607, Մայիս
 13ին առ նոյն Քահանայապետ: Այս թուղթը
 հասած է մեզի թարգմանութեամբ⁵: Դաւիթ
 կաթողիկոս յայտնելով միւսանդամ իւր են-
 թարկումը Հոռոմի քահանայապետական դեր-
 իշխանութեան կը խնդրէ, որ հաճի Քահա-
 նայապետն Պօղոս Ե. գրել թուղթ մը առ Շահ
 Աբաս. «որ նա չնորհէ իրենց՝ իրենց հին կրօ-
 նական ազատութիւնն եւ եկեղեցական եւ աշ-
 խարհական ինքնավարութիւնը».

⁴ St. Kakasch, Iter Persicum. Kurze, doch aus-
 führliche und wahrhaftige Beschreibung der Persia-
 nischen Reise. Altenburg 1609, էջ 115. Հմտ. A. Jo-
 hannissjan, Israel Ory und die armenische Be-
 freiungsidee. München 1913, էջ 34.

⁵ P. Fr. Antoine de Gouea, Relation des Gran-
 des Guerres et victoires obtenues par le roi de Perse
 de Cha-Abbas contre les empereurs de Turquie Mo-
 hamet et Ahmet son fils. Trada de l'Original Portu-
 gais. Rouen 1646, էջ 412. Հմտ. նաեւ Thomas a
 Jesu, Thesaurus divinae Sapientiae, lib. 7, cap. 19.
 և A. Johannissjan, առ, 34.

Եւ նոյն խնդիրը, զոր 1603ին ներկայացուցած
 էր Տեկանդերին: Այս քայլը առնելու համար
 յորդորած էին զինքը Սպահանի Աւգոստի-
 նեանք: Կ'ըսուի թէ Նոր Ջուզայի իշխանները,
 երբ լսեցին թէ կաթողիկոսը նման բովանդա-
 կութեամբ թուղթ է գրած, շատ տփուհեցան
 եւ Աւգոստինեանց հետ սկսուած բանակցու-
 թիւնները ի գերեւ հանեցին: Կան ըսողներ, թէ
 նոյն իսկ ամբաստանած ըլլան Աւգոստինեան-
 ները Շահին քով, հաւատացնել ուղեով, թէ
 Հայոց միութիւնը Հոռոմի Եկեղեցւոյն հետ
 համադօր է Շահի իշխանութենէն հեռանա-
 լուն, որովհետեւ Միութիւնս իւր հետը պիտի
 բերէ Հայաստանի նուաճումը քրիստոնեայ իշ-
 խանէ մը⁶:

Թէ կաթողիկոսի մէկ թուղթը ուղղուած
 առ Ս. Աթոռը, հայ ժողովրդեան մէկ մասին
 մէջ ազատագրութեան յոյսեր եւ ուրիշ մէկ
 մասի մէջ քաղաքական յոռետեսութիւն ար-
 թնցուցած ըլլայ, կը համարինք շատ բնա-
 կան: Տեղահանուած ժողովուրդը, որ նոր
 հայրենիքի մէջ ենթարկուած էր ամէն տեսակ
 զրկանքի, կարօտով կը նայէր ետ դէպի իր
 խանձարուրքը. հինաւուրց այն ըմբռնումը,
 թէ օտարադէն բռնաւորներու լուծը արեւ-
 մտեանց «Փռանկներու» աջակցութեամբ պի-
 տի թօթափուի, կը ներշնչէր իրենց յոյս եւ
 լաւատեսութիւն: Բայց կար նաեւ յոռետես-
 ներու խմբակցութիւն մը, որ ամէն փորձի
 կատարածը սեւազոյն կը տեսէր. որովհետեւ
 անորդում էին տէրերը, կ'ընկճէին ամէն շար-
 ժում ամենախիստ միջոցներով: Անշուշտ
 դրութեան փափկութիւնը ծանօթ էր Կաթո-
 ղիկոսին. որուն միակ փափազն էր Երկրին մէջ
 ցիրլուցան եւ օտարութեան մէջ վտարանդի ժո-
 ղովրդեան անտեսական պայմանները բարւո-
 քել եւ ազգային Եկեղեցւոյ ազատութիւնը
 պահպանել: Հաւատքը, թէ ժողովրդեան
 դժուարին կացութեան գոնէ դոյզն չափով
 փոփոխեք մը կրնայ ակնկալուիլ, եթէ Ս.
 Աթոռը միջնորդէ Շահին քով ի նպաստ Հայոց,
 զրդած էր կաթողիկոսը, անշուշտ Սպահանի
 լատին առաքեալներու յորդորմամբ, առնելու
 այս քայլը: Կարելի է ենթադրել թէ առ այս
 քաջալերած ըլլան զինքը նաեւ Ջուզայեցիք,
 որոնց խնդրանքով 1602ին դիմած էր Մելքի-
 սեղեկ Կղեմէս Զ. ին:

Ջուզայեցիներու համար կարելու էր Ս.

⁶ Նման թելադրութիւն մ'ալ ըրին Ջուզայեցիք
 Շահին 1610ին առթիւ Հոխսիմեանց նշխարներու
 երկրպ փոխադրելու փորձին. Առ. Դաւիթ., էջ 191:

Աթոռի պաշտպանութիւնը: Արեւելքի վաճառականութիւնը անոնց ձեռքն էր արդէն Օսմանեանց օրով: Ունէին առեւտրական յարաբերութիւններ թէ արեւելեան եւ թէ արեւմտեան շահաստաններու հետ: Եւ Շահ Արապ, երբ որոշեց Ջուզան տեղահանել (1605), ոչ այնչափ անոնց զիղգած ոսկւոյն եւ արծաթին աչք ունէր, որչափ կը զիտէր անոնց փորձառութիւնն ի նպաստ Պարսկաստանի առեւտուրին շահագործել: Այս պատճառաւ ալ ընծայեց անոնց ամէն զիւրութիւն, փոխադրուելու Սպահան եւ քաղաքին արուարձանին մէջ զեւտելու: ուր եւ հիմնուեցաւ Նոր Ջուզան: Առեւտրական հիմնարկութիւնները երկրին եւ արտասահմանին մէջ մնացին. ստացան նոր արտօնութիւններ զարգացնելու նոր հայրենիքի տուրեւտով վաճառականութիւնը: Եւ Շահը չխաբուեցաւ իւր ակնկալութեանց մէջ: Պետութեան մենաշնորհն էր մետաքսը. որուն արտահանութիւնը արտասահմանեան շուկաներ պիտի հոգային Ջուզայեցիները: Ապահով կուտաններ ձեռք բերելու համար Հընդկաստանի եւ Եւրոպայի նաւահանգիստներու մէջ կարեւոր էր բարեկամական յարաբերութեան մէջ ապրել Ս. Աթոռի եւ անոր միջնորդութեամբ Եւրոպական իշխանութիւններու հետ: Այս կապը կնքուեցաւ արդէն երկրին մէջ, ուր կային լատին առաքելներ, Աւգոստինեան, Բոկոտոն Կարմեղեան եւ այլ Միաբանութիւններէ: Խոջայ Նազար, որ Շահ Արապին մտերիմն էր, անձամբ կը հովանաւորէր այս սերտ եւ բարեկամական կապակցութիւնը արեւմտեանց հետ: Սկսած էր արթննալ նաեւ այն գաղափարը, թէ պէտք է Արեւմուտք, նախապատուութիւնը տալով Հոռոմի, հիմնել Հայկական դպրանոց մը, ուր հայ մանկերուն ծանօթանար եւրոպական լեզուներուն եւ մարզուէր արեւմտեան գիտութեամբ. ծախքերը յանձն կ'առնէին հայ վաճառականները: Ի Սպահան կը յաճախէր հայ աշակերտութիւնը եւրոպական առաքելներու դպրոցները:

Դաւիթ կաթողիկոսի զրած այս թուղթերու մասին ունէ՞ր Մելքիսեղեկ կաթողիկոս տեղեկութիւն. չգիտեմ: Բայց ծանօթ է պատմութենէն, թէ Մելքիսեղեկ կաթողիկոս երեք տարի ետքը, «1610 Մայիս 15 Շարաթ»⁸, գրեց

⁷ 1610ին կ'ըսէին Հայերը Շահ Արապին. «ժողովուրդըն Ջուզայեցւոց եւ Գողթան գաւառին... բազումք են վաճառականութեամբ այժմ ի Փոսնկասան» Առ. Դաւրիթեցի, 191:
⁸ Թուականը թղթին լատիներէն թարգմանութեան

անձամբ թուղթ մ'առ նոյն Պողոս Ե.: Թղթատարն էր Ջաքարիա Վ. Վանեցի: Սա 1610 Մայիս 1 թուակիր կոնդակով կարգուած էր նուիրակ Լվովի, Կամենիցի, Սեչովի, Եաշի «Եւ Փոսնկասանու քրիստոնէիցը առ հասարակ»⁹: Ջաքարիա 1611 Յունիսին կը հասնի Անկիւրբոյ վրայէն¹⁰ Կ. Պոլիս. հոն առնելով իրեն ճանապարհորդակից Սիմէոն դպիր Լեհացին, ամսոյն տասնմէկին կը մեկնի ցամաքի ճանապարհով Հոռոմ, ուր կը ժամանէ Օղոստոսի վերջերը: Իրը եօթնամսեայ ժամանակ մը կը մնայ Ջաքարիա Հոռոմ: Այս միջոցին կը ներկայանայ յունկոնդուութիւն Պաւղոս Ե. Քահանայապետին, մատուցանելու Մելքիսեղեկ կաթողիկոսին Կոնդակն եւ յարգանաց նուէրները: Տեսակցութեանս մասին մանրամասնութիւններ հաղորդած է Սիմէոն դպիր Լեհացի, որ ընկերակցած էր Ջաքարիայի: Այս տեղ յատուկ կը բերեմ Սիմէոն դպրի Ուղեգրութենէն հետեւեալ տողերը¹¹. «Օր մի եկին եպիսկոպոսք տանել զՎարդապետն ի Փափն: Եւ զնացեալ տեսաք զտարայն մեծ... Եւ ինքն (Փափն) նստեալ էր յոսկիակազմ աթոռ... Եւ Վարդապետն զնաց եպոպ զտան... Եւ ի վառաց անտի եւ յահեղ մեծութենէն եւ վասն ամօթոյն ահ եւ զողումն կալաւ, մինչ զի քըրտունը հոռէին յերեսաց մերոց: Փափն եհարց թէ «Ուստի՞ դան. եւ թէ ո՞րպէս են Հայք ի անօրինաց ձեռս»: Եւ նա ասէ թէ «Ի սուրբ Էջմիածնայ դամ, յԱրարատ լեռնէ. եւ թէ բարիք են Հայք աղօթիւք ձեր, սուրբ Հայք»: Եհարց թէ «Ո՞ղջ է Մելքիսեթ կաթողիկոսն». եւ նա ասէ. «Այո, ողջ է ի սէր քո բաղձալի».

⁹ Եւ զնացեալ տեսաք զտարայն մեծ... Եւ ինքն (Փափն) նստեալ էր յոսկիակազմ աթոռ... Եւ Վարդապետն զնաց եպոպ զտան... Եւ ի վառաց անտի եւ յահեղ մեծութենէն եւ վասն ամօթոյն ահ եւ զողումն կալաւ, մինչ զի քըրտունը հոռէին յերեսաց մերոց: Փափն եհարց թէ «Ուստի՞ դան. եւ թէ ո՞րպէս են Հայք ի անօրինաց ձեռս»: Եւ նա ասէ թէ «Ի սուրբ Էջմիածնայ դամ, յԱրարատ լեռնէ. եւ թէ բարիք են Հայք աղօթիւք ձեր, սուրբ Հայք»: Եհարց թէ «Ո՞ղջ է Մելքիսեթ կաթողիկոսն». եւ նա ասէ. «Այո, ողջ է ի սէր քո բաղձալի».

¹⁰ Կոնդակն հրատարակուած է Կամենից, էջ 239—240: Թուականը «Թվին ՌՇԹ» (էջ 240) ապագրութեան վրեպակ է, պէտք է ուղղել ՌԹԹ (համա. էջ 239):

¹¹ Սիմէոն Դպիր Լեհացւոյ Ուղեգրութիւն. հրատ. Ն. Ալիսեանի, Հանդ. Ա. մ. ա., 1933, 481 = արտատպ., էջ 95—96:

Եւ ետուր նմա նամակ եւ երկու սօֆ եւ խալի մի եւ փիլոնի կոծակ խաչածեւ յիսուն արմասով եւ բանդահր հինգ դրամ: Առեալ (Փափն) զնամակն՝ զընծայս ոչ կամեցաւ առնուլ. ասելով թէ «Մեզ չէ պարտ այդպիսի տրօք սիրել զմիմեանս»: Եւ Վարդապետն չնորհակալեցաւ, զնաց եւ չէառ (զնուէրսն ընդ իւր): Եւ նա (Փափն) զկնի առաքեաց. եւ պատվիրեաց լաւ հարկիք առնել վարդապետին: Իսկ Վարդապետն դարձեալ ուղարկեց եւ ասէ. «Ընդէ՞ր ոչ առնու. միթէ ոչ հաճեցաւ կամ թէ իւր լայելս չէ՞ զի չնչին եւ ոչինչ է մեր տուրքն սակաւ: Ապա հաղիւ էառ զիսան. զբանդահրն եւ զայլն յետ զրկեց»:

Կաթողիկոսի նամակին սկզբնազերը չէ յայտնուած տակաւին. բայց լատիներէն թարգմանութիւն մը, կատարուած Բարթոլոմէոս Արզարի խալերէն թարգմանութեան վրայէն, աւանդած է մեղի A. Bzovius¹²: Մելքիսեղեկ հոս կը հիւսէ Պողոս Ե. ի գովութիւնը, կը փառաբանէ Ս. Աթոռին ճոխութիւնն եւ կը յայտնէ իւր հպատակութիւնը Հոռոմայ Գահին: Ի մէջ այլոց կը գրէ կաթողիկոսը. «Որպէս Արեգակն սկիզբն է մարդկային կենաց եւ ամենայն կենդանեաց, այսպէս եւ Դուք, վէժ կենդանի կենդանարար հաւատոց՝ բազմեալ յԱթոռ գովիլըն կենաց ամենայն հաւատացելոց շնորհէք, այնու իսկ՝ զի ի գերկս ձեր գան ժողովին համօրէն ազգք քրիստոնէից, քանզի գրեալ է. Ի վերայ այդը վիմի շինեցից զեկեղեցի իմ: Եւ որպէս արեգակն մի միայն է, եւ միով զնորան եւ շողով զընաւ տիեզերս լուսաւորէ, ունի ընդ իւրեւ զչնչաւորս եւ զանչնչաւորս եւ շարժէ գնոսին, զի ամենեցուն ինքն իշխան եւ պետ երեւիցի, այսպէս եւ Դուք՝ զերազոյն քահանայապետական ճոխութեամբ միոյ միայնոյ Առաքելական Աթոռոյ՝ ամենեցուն ամենայն քրիստոնէից առաջնորդէք իշխանութեամբ, ունիք զամենեսին ընդ ձերով հրամանաւ, զայն ճանաչեն տիեզերք, եւ ամենայն ազգք հաւատացելոց մեծարեալ պատուեն. չէ ոք որ՝ ձերոյ

¹² Abraham Bzovius, Pontifex Romanus. Coloniae Agrippinae, 1619, էջ 202—205. Եւսը յառաջբերուած նաեւ նոյն հեղինակին հետեւեալ գործին մէջ՝ Paulus Quintus Burghensius P. O. M., Romae 1612, էջ 43—52. Տե՛ս քաղուածարար՝ Stephanus Azarian, Ecclesiae Armenae traditio de Romani Pontificis primatu iurisdictionis et inerrabili magisterio. Romae 1870, էջ 113—121. Հմմտ. եւ Հ. Ա. Պալմեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, էջ 161:

լիմաստութեան եւ կամաց հակառակ կայցէ» (Պալմեան, 161):

Կաթողիկոսին նուիրակը 1612 Մարտ 26ին (Ծաղկազարդի շաբաթ) կը մեկնի Հոռոմէն, հետեւեալ քահանայապետական համառօտադիր մը եւ նուէրներ կաթողիկոսի հասցէին: «Գրեցին, կ'ըսէ Սիմէոն Լեհացի, թուղթ Հոգեւոր Տիրոջն Մելքիսեթին. զի նարմէ էր առաքեալ. եւ երկու զէրպալ շուրջառ իւր սառքեալ. եւ երկու զէրպալ խաչ մի ոսկի ընդ մը եւ նուէրներ ի խաչափայտից եւ Բժ մարչիլ երեսօք խարճի»¹³: Նոյն իմաստով կը գրէր նաեւ Պողոս Ե. «Ընկալաք ի մշտնջենաւորս զպատուականազոյն նուէրն զընծայեալն մեզ յանուն ձեր ի սիրելի որդւոյ Ջաքարիա վարդապետէ, յորոյ ի ձեռն եւ մեք առաքեմք եղբայրութեան ձերում մասունս ի սուրբ խաչափայտէն եղեալ յոսկեղէն խաչի, զոր կապիմք զի ընկալցիս ի մէջ փոխանակ ընդ թափն զոր ի ձեռն թղթոյդ եղեր ի գլուխ մեր: Ընկալցիս ի Ջաքարիայ նաեւ հանդերձս ինչ քահանայականս ի պէտս աստուածեղէն պաշտամանց, ձօնեալ քեզ ի մէջ ճանդերձ օրհնութեամբ Ս. Պետրոսի»¹⁴:

Ջաքարիա Կ. Պոլիս հասնելով կ'ընտրուի պատրիարք: Քահանայապետական համառօտադիրն եւ նուէրները կը զրկէ կաթողիկոսին երկու եպիսկոպոսներու ձեռօք: Այս մասին կը կարդանք Պողոս Ե. ի առ Ջաքարիա գրած թուղթին մէջ (20 Հոկտ. 1613). «Իսկ ինչ որ կը գրես թէ հող տարած ես զրկելու առ յարդիլի եղբայրն մեր Մելքիսեղեկ՝ Մեծաց Հայոց կաթողիկոսը, մեր նամակն զոր մեր ձեռքէն առած էիր, եւ ասոր համար ձեր ազգէն երկու եպիսկոպոս ձամբայ դրած ես մեր ընծաներովը, այս ամէնը կարի հաճելի եղաւ մեզ. որովհետեւ մեծ փափաքով կամ լաւ եւս մեծ սրտմաշուքով պատասխանի կը սպասենք որդւութեան մասին այն երկու մոլորութեանց, որոնց համար ըսիր մեզ որ դեռ կան ձեր եկեղեցւոյ մէջ, այսինքն թէ քահանայապետը ձեռք չէք խառներ. եւ թէ Երեքսրբեան փառատարութեան մէջ «Որ խաչեցար» բառերը կը յաւելուք, որոնք կաթողիկէ սուրբ Եկեղեցիէն Միտոպական վճռով դատապարտուած են. որովհետեւ ինչպէս կրցար իմանալ, այս երկու մոլորութիւնն ալ ուղղելէ առաջ չէք

¹³ Սիմէոն Լեհացի, Հանդ. Ա. մ. ա., 1934, 69 = արտատպ. 176:
¹⁴ Bzovius, Pont. Rom., 207.

այլ կարգամբ եւ նորովս այնոցիկ որ ասենն Ամենասուրբ Երրորդութիւնն որ խաչեցար. այս ինքն գերիս անձինս միոյ էութեանն ի խաչ հանեն: Այլ քաւ ի մէջն խորհուրդ այդպիսի. զի մեք ոչ Հօրն եւ ոչ սրբոյ Հոգւոյն, այլ միայնու՛մ Որդւոյ մարդացելոյ գնոյն երգեմք՝ որ խաչեցար: Նմին իբի իսկ նորովեմք զԱբառն-դիտոս (°) եւ զՊետրոս Անտիոքացի դամբարիշտ հերետիկոսեայնս. եւ յայս միաս իսկ յաւե-լումք որ խաչեցար: Զի Նեստորիոս յուրաստ յաստուածութենէն Քրիստոսի լեալ հայցոյէր, եթէ որ ի խաչն բեւեռեցաւ մարդ սոսկ էր եւ ոչ Աստուած ճշմարիտ: Այլ մեք դաւանեմք ի Քրիստոս զԱստուած ճշմարիտ եւ զմարդ ճշմարիտ, աստուածութեամբն անշարժարելի եւ ըստ մարդկութեանն չարչարելի. չարչարեցաւ ի մարմնի զոր զղեցան եւ ոչ յայլում իմիք, որպէս Նեստոր եւ Պետրոս համբաւեն զՔրիստոսէ, եթէ մարդ լիկ իցէ: Իսկ մեք հաւատամք, եթէ մարդոյ լիկոյ չէ հնար զաշխարհ փրկել եւ ոչ Աստուծոյ միայնոյ զմահ մեռանել: Վասն սորին իսկ այսորիկ խոստովանիմք որ խաչեցար, զի յամօթ արասցուք զայնոսիկ, որ միանգամ յաստուածութենէն յուրաստ կայցեն: Ի մէջ այսպիսեաց հարկ ի վերայ կայ մեք կեալ եւ ընդ նոսին հանապաղ ի կող եւ ի կռիւ գալ:

Իսկ ժողովոյն Քաղկեդոնի էյօթարիմք տալ զձեռնադիր մեք, զի շատ իսկ համարիմք զսահմանսն առաջին երկից ժողովոցն գումատ-րելոց յանուն ամենասուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, որք վասն ուղղափառ հաւատոցն կարգեալ աւանդեցան, այս ինքն զսուրբ Երրորդութենէն եւ զմարմնաւորութենէն Բանին Աստուծոյ ճառեցան: Զայլ ամենայն ժողովսն՝ որ նախ քան զմեզն կացին չհամարեցան ինչ կարեւոր, նմին իբի իսկ եւ ժողովոյն Քաղկեդոնի չգտան առաջիկայ: Այլ սակայն մեք զայն ամենայն ժողովս տիեզերականս, յորս կարգեցան սահմանք ինչ կաթողիկէ հաւատոց, ընդունիմք, իսկ զայլսն մերժեմք:

Զայս ամենայն ըմբոն եւ ի դէպ համարեցաք յայտ առնել աստէն սրբութեան ձերում. ոչ զի հերձուածիւ ինչ կամ հերետիկոսութեամբ զմեզ ի ձէնջ բաժանել կամիմք եւ կամ զայսոսիկ զըրեալ յամբարհաւածութենէ կամ ի սրամտութենէ ի գրի հարկանեմք, այլ միամտութեամբ եւ խոնարհութեամբ անկեղծաւոր սրտի ի փառս Աստուծոյ. եւ հայցեմք ի սրբութենէ ձերմէ, զի եթէ տեսանիցեն

զմեզ յիմիք պակասեալ առ անգիտութեան, ցուցցես մեզ իմաստութեամբ քով եւ խրատեցես զմեզ. քանզի մեք պատրաստ եմք ըստ չարիտ տկարութեան մերոյ հնազանդել վաղվաղակի, ոչ միայն յայս երիս խնդիրս, այլ եւ յամենայն աստուածուսոց կրօնս եւ ի ծէսս Հռովմէական Եկեղեցւոյ, զի եղիցի մի հօտ եւ մի հովիւ: Փափաքիմք զի զայդ եւ այլք ի քրիստոնէից առնիցեն. զի ամենեցուն մեր մի սիրտ եւ մի հոգի իցէ ի Տէր. եւ ձեզ անկ է այդմ խնամ տանել ըստ ձերում հովուական պաշտամանն, որ էքդ գլուխ եկեղեցւոյ:

Կարգեցաք մեք զԶաքարիա յետեղակալ մեր ի վերայ Եկեղեցւոյն Կոստանդնուպոլսոյ, մերժելով անտի ի բաց զեպիսկոպոսն զայն գտող: Նա նուիրակ իմ էր եւ պատգամախօս առ սրբութեան ձերում, քաջ ծանօթական իրացդ Հռովմայեցւոց:

Հրամայեցէ սրբութիւնդ ձեր եւ հնազանդիմք մեք, արմատացեալք ի սէր եղբայրութեանդ, յորմէ ակն ունիմք զամենայն բարիս: Պահեալ պահպանեցէ զձեզ Աստուածամէն:

Գրեցաւ յամի Ռիֆ ըստ թուականութեան Հայոց. իսկ ըստ Հռովմէական համարոյ յամի Քրիստոսի 1613 ի ԻԲ. աւուր մարտի. կնքեալ կնքովն Մելքիսեղեկ կաթողիկոսի:

Թարգմանեցաւ (ի լատիներէն) յետալական թարգմանութենէ անտի Բարդղղովմեայ Աբգարու:

Բողովիուս եւ իրեն հետեւելով Պրատտի¹⁸ կ'ըսեն թէ թղթաբերն եղած ըլլայ Զաքարիա վարդապետ: Այս ըմբռնումը արդենքն է Մելքիսեղեկի թղթոյն սխալ հասկացողութեան. հոն խօսքը 1610ին գրուած թուղթի մասին է, զոր, ինչպէս տեսանք, ստուգիւ բերած յանձնած էր Զաքարիա 1611ին: 1613ին Զաքարիա կը գտնուէր Կ. Պոլիս պատրիարքական աթոռին վրայ, զոր կ'ակնարկէ նաեւ Մելքիսեղեկ, «կարգեցաք մեք զԶաքարիա յետեղակալ մեր ի վերայ Եկեղեցւոյն Կ. Պոլսոյ, մերժելով անտի ի բաց զեպիսկոպոսն զայն գտող», այսինքն զԳրիգոր Կեսարացի: Ունիք Պօղոս Ե. ի թուղթը ուղղուած առ Զաքարիա 1613 Հոկտեմբեր 20ին ի Կ. Պոլիս:

Կարեւոր է ուշադրութեան առնել Մելքիսեղեկի թուղթին այն տեղիքը, ուր խօսք կ'ըլ-

¹⁸ G. Piatti, Storia critico-cronologica de' Romani Pontefici, t. 12 (Napoli 1768), էջ 63. Համա-Վալէմբերեան, Կենսագրութիւններ, էջ 55—56:

լայ իրեն դէմ յարուցուած հալածանքներու մասին. այս կէտին պիտի անդրադառնանք ուրիշ տեղ, ուր պիտի խօսինք մանրամասնօրէն նաեւ Հռիփսիմեանց նշխարաց շուրջը յուղուած խնդրոց վրայ:

Կը գրէ Մելքիսեղեկ, թէ «հանդերձ եպիսկոպոսակցօք» կարգացած է Պօղոս Ե. ի թուղթը: Այս եպիսկոպոսները անշուշտ կաթողիկոսին համակիրներն եւ խորհրդակիցներն, ուրիշ խօսքով կուսակիցներն էին, որոնք իբրեւ «Երեւանցիներ» դիրք բռնած էին «Ջուղայեցիներու դէմ: Ինչպէս ժամանակակից մը, P. Tadeo di S. Eliseo Բոկտոն Կարմեղեանց փոխ-ընդհանրականն ի Սպահան¹⁹, կը գրէր 1611ին, այս շրջանին Հայոց եկեղեցին երկու կուսակցութեան բաժնուած էր. Երեւանցիները կը պաշտպանէին Մելքիսեղեկի կողմը, եւ Ջուղայեցիները՝ Դաւիթ կաթողիկոսի կողմը, թէեւ սա հրաժարած էր կաթողիկոսութենէն, թողլով իշխանութիւնը Մելքիսեղեկի ձեռքը: Պատմական լուսարանութեան համար կարեւոր կը համարիմ հոս յանուանէ յիշատակել այն եպիսկոպոսները, որոնք Մելքիսեղեկի կողմը կը պաշտպանէին եւ կը կողքիսեղեկի կողմը կը պաշտպանէին եւ կը կողմէին «Երեւանցիներու» կուսակցութիւնը: Այս անունները համարուած կը գտնեմ 1611, Մայիս 1ին Մելքիսեղեկի գրած մէկ կոնդակին մէջ²⁰, որով զԶաքարիա վարդապետ եւ զԴաւիթ եպիսկոպոս նուիրակ կը կարգէ «նախ եւ առաջին ի լախաց երկրի մայրաքաղաքից Իրովայ... երկրորդ՝ Կամենիտու... երրորդ՝ Սէջովու... չորրորդ՝ Եաշու... եւ ֆոանկոսա-նու քրիստոնէիցք առ հասարակ ամենեցուն ամենայն»: Կոնդակս գրուած է «ի տէր Մելքիսէթ կաթողիկոսէ ամենայն Հայոց. եւ (1) ի տէր Ստեփաննոս վարդապետէ եւ (2) ի տէր Ստեփաննոս եպիսկոպոսէ եւ (3) ի տէր Կարապետ վարդապետէ եւ (4) ի տէր Յովհաննէս վարդապետէ. նա եւ (5) Ստեփաննոս արհի եպիսկոպոսէ, այլ եւ (6) ի Զաքարիայ վարդապետէ եւ յայլ միեղին եղբարցս որ աստ կան հաւաքեալ ի սուրբ էջմիածինս»:

Վաւերականութեան վկայած են 7. «Աթոռակալ Մարտիրոս եպիսկոպոս». 8. «Համապ(սպ) եպիսկոպոս առաջնորդ սուրբ ուխտին փրկչական պ(ատու)կան պատկերին». 9. «Միքայէլ առաջնորդ սուրբ ուխտին Ազնը-

¹⁹ Propaganda, t. 189 (Lusitania, India et Japonia), f. 186.
²⁰ Հրատարակած է Հ. Ղ. Ալիշան, Կամենից, էջ 239—240:

կուց վանացն, որ է նահատակ սուրբ Ստեփաննոս քահանային». 10. «Մանուէլ եպիսկոպոս առաջնորդ սուրբ Աստուածածնին». 11. «Աստուածատուր եպիսկոպոս առաջնորդ սուրբ ուխտին Այր(ի)վանաց»:

Այս եպիսկոպոսներէն ոմանք յիշուեցան արդէն վերագոյն:

Պօղոս Ե. պատասխանեց Մելքիսեղեկի այս երկրորդ թղթին ալ, 1615, Մայիս 28ին, ընդարձակօրէն ծանրանալով խնդրոց առարկայ եղած յիշեալ հարցերուն վրայ: Բոգովիուս, որ ամբողջութեամբ հրատարակած է այս համառօտագիրը²¹, զարմանալի կերպով զանց ըրած է յառաջ բերել համառօտագրին գրութեան թուականը: Բարբախտաբար աւանդած է զայն մեզի Relatio brevis²²: Այս գրուածքին անանուն հեղինակը յիշելով Հայոց կաթողիկոսի եւ Ս. Աթոռին մէջ փոխանակուած թղթակցութիւնները, կը գրէ. «Մելքիսեղեկ Մեծաց Հայոց կաթողիկոսը, որ անցեալ տարի ի Կամենից վախճանեցաւ, երկու թուղթ գրեց առ Պօղոս Ե. միութեան խնդրոյ մասին, մատուցանելով անոր իր հնազանդութիւնը: Առաջինը գրուած է 1610ին, երկրորդը՝ 1613, Մարտ 22ին: Երկուքին ալ պատասխանեց Մեծ Քահանայապետը. առաջնոյն՝ ի ձեռն Զաքարիա Հայոց վարդապետին, որ կաթողիկոսին նուիրակն էր, 1612ին, Բ. Կաղանդից Ապրիլի (25 Մարտ), որուն ուղարկեց նաեւ Ս. Խաչի մատուցք, ոսկի տուփի մէջ զետեղուած, եւ խորանի վերաբերեալ հանդերձներ: Երկրորդին պատասխանեց 1615ին, Ե. Կաղանդիցն Յունիսի (28 Մայիս): Այս թուղթերու եւ Համառօտագրիներու վաւերական օրինակները կը գտնուին Հայոց Գեր. Արքեպիսկոպոսի քով» (ի Լվով):

Որչափ ալ կը զանգատէր Մելքիսեղեկ, թէ չըջապատուած է լրտեսներէ, որոնք մանր կը գիտեն իր շարժումներն, այս պատճառաւ ալ ստիպուած է ամենայն ինչ ի ծածուկ գործել, բայց եւ այնպէս, ինչպէս կ'երևայ, ի Հոռոմ կաթողիկոսին դրութեան ծանրութիւնը չէ ըմբռնուած ի մերձուստ: 1613ին կաթողիկոսի թուղթն (թղթե՞րը) առ Պօղոս Ե. տպագրութեամբ հրատարակ հանուած է ի Հոռոմ եւ ցրուած հայաբնակ վայրեր: Կաթողիկոսի զազանի դիւանադիտական քայլերու յայտնութիւնը անշուշտ պիտի տար առիթ իր հակառակորդներուն, նոր յարձակումներ ընելու իր

²¹ Bzovius, Pontifex Romanus, էջ 208—210.
²² Propaganda, 293 (Armeni), f. 210.

վրայ: Թէ ի՞նչ տպաւորութիւն ըրաւ թուղթին ընթերցումը ժամանակակիցներու վրայ, ըստ մասնէ կարելի է տեսնել Գրիգոր Կեսարացոյ յետագայ տողերէն: Պէտք է կանխել ըսել թէ Գրիգոր Կեսարացի, որ 1601ին հեռացնելով Մելքիսեղեկը Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռէն՝ զբաւած էր զայն, եւ ունեցած էր շատ անգամ բարեմակներ Յովհաննէս Խուրմուզի, վերջին անգամ Չաքարիա վանացոյ հետ, որոնք իր դէմ մրցակիցներ էին պատրիարքական աթոռին վրայ, ի սկզբանէ անտի անհաշտ հակառակորդ մ'էր Միւսթեան գաղափարին. որ աւելի սաստկացաւ, երբ Չաքարիա, Հոսմէն վերադարձին, հեռացնելով զինքը աթոռէն՝ զբաւեց զայն (1612 Ապրիլի—Մայիս) հաւանութեամբ Մելքիսեղեկի:

Յատաճրբութիւնն անուած է Գրիգոր Կեսարացոյ առ Մելքիսեղեկ ուղղուած թղթէն²³, գրուած 1614ին հաւանօրէն:

«Եւ հինգերորդ անկարգութիւն ձեր այս է, որ յանդիմարար վստահացար եւ ձեռնարկեր ի մեր սուրբ հաւատս. զի կամիս զմեր ուղղափառ հաւատս խախտել եւ տապալել. եւ զմեզ ի հերձուածողութիւն եւ յուրացութիւն ձգել, Ֆոսնդաց հետն միարանելով եւ ձեռագիր տալով, զՔաղկեդոնի ժողովն ընդունելով եւ ի Քրիստոս երկու բնութիւն ասելով կամիս զմեզ ի ներքոյ այն անիծից մուծանել, զոր ի վերայ Քաղկեդոնականացն է: Զի զայն Գրիգոր որդի չՉաքարացն, որ Վանայ զօլուսթաւորքն զինքն ի Վարագայ քաղաքաւ հաւածեցին... զու զնա ընդունեցեր... եւ ոչ թէ միայն ընդունեցեր զնա, այլ քեզ փոխանորդ կացուցեր եւ նուիրակ կարգեցեր եւ առաքեցեր. զի ուր եւ զնաց՝ աղմկելով եւ խոռովութեամբ ելից զերկիրն:

Մանաւանդ քան զսմեկնայն մեծ չարիքն այս են, որ զքո ձեռագիրն ետուր Փափուն, թէ ես Մելքիսեղեկ կաթողիկոս Հայոց, իմ արգիս վարդապետօք, եպիսկոպոսօք եւ համայն ժողովրդովք հնազանդիմք Հոսմայ եկեղեցւոյն եւ ընդունիմք զժողովն Քաղկեդոնի եւ զտուժարն Լեւոնի. եւ նորովմք զԴէոսկորոս եւ համախոհք նորա. եւ ասեմք ի Քրիստոս երկու բնութիւն եւ երկու կամք: Եւ այս ձեռագրին օրինակն Փափուն գրել է պատմայ զրով եւ յուղարկել է ի Լեւոն, նոյնպէս եւ յամենայն տեղիս, թէ Ազգն Հայոց ի մեր հաւատն են

²³ Հրատարակուած Գ. Վ. Սրուանձաւանցէ Թոթոս Աղբար, Բ., 288—293:

զարձեր. այլ եւ ի Վանատիկ եւ յայլ բազում տեղիս զիր է զբեր եւ յըրկեր. եւ այս զբոյս մէկն ի Համիթ է եկեր. եւ զնորա մէկ օրինակն Աւետիս կաթողիկոսն է տարեր ի հետն. եւ զմի օրինակն Համթեցիքս մեզ էին յըրկել, ասելով թէ Տեսէք, տեսէք զմեր կաթողիկոսին զխայտառակութիւնն. զայսպիսի հերձուածողն զուք ի՞նչպէս կաթողիկոս կու ընդունիք: Եւ զայս եկեալ թուղթս մեք ամենեքեան ականատես եղեալ ընթերցարք: Այս ի՞նչ բան է քո առած բանն. զի կամիս երկրորդ եղբ լինել, եղբերիչ եւ խանդարիչ Հայոց ազգիս... զինչ կ'ուզես այս ողորմելի եւ տառապեալ ազգէս Հայոց. է՞ր չես թողուր զիւրեանս յիւրեանց աղքատութեանն. զի թէպէտ որ ազգս Հայոց մարմնով ծառայ են եւ աղքատ, այլ քրիստոնէական ուղղափառ հաւատովս ազատ են. հողով փարթամ, եւ հարուստ օրինօք եւ պատուիրանօք...: Զի մեք ամենեքեան հաստատուն կամք ի վերայ ուղղափառ սուրբ հաւատոյս մերոյ. եւ նորովմք եւ անիծանեմք զհաւանօղոսն Քաղկեդոնի սուտ ժողովոյն եւ զմիարանօղոսն ընդ Ֆոսնդացն, թէ՛ կաթողիկոս է, թէ՛ վարդապետ, թէ՛ եպիսկոպոս, թէ՛ քահանայ, թէ՛ իշխան եւ թէ՛ սամիկ աշխարհական...:

«Այլ եւ վասն Ֆոսնդաց միարանութեան, զի թէ ստոյգ է որ զու չես միարաներ, նա Փափուն զիր մի զբէ ի քեզանէ եւ յայլ ամենայն վարդապետաց, որ քո մօհրն եւ վարդապետացն եւս ի վերայ լինի. եւ այն չՉաքարիային եւս չարաչար բանադրանք մի զբէ եւ կնքէք ամենայն վարդապետք. եւ զիր ի մէջ Փափոյ թղթին եւ յարկէ, թէ Ոմն Չաքարիայ անուն վարդապետ, որ ի մեզանէ նուիրակ եկն յայդ կողմունքդ, եւ առանց մեր կտմաց եւ զիտութեան իմ մօհրովս սուտ ձեռագիր է տուեալ ձեզ. եւ իմ անունս է հանել որպէս թէ ես Մելքիսեղեկ կաթողիկոս իմ ազգաւս Հայոց ի հետ Ֆոսնդին միարաներ եմ եւ զՔաղկեդոնի ժողովն կ'ընդունիմ. նա սուտ է. ահա մեք զնա չարաչար պատմեցար եւ որոչեցար յեկեղեցւոյս:

«Նաեւ յայլ քաղաք որիչ որիչ զիր զբէ ի վերայ ստաճնորդաց եւ իշխանաց, թէ Ահա ես զայն չՉաքարիայն բանադրեցի, թէ ո՛ւր եւ հանդիպեցի, մի ընդունիք, այլ հաւածեցէք որպէս զհերձուածօք. եւ համարեցէք զնա որպէս զպիղծն Արիոս եւ Նեստոր: Թէ զայս անենա՝ կ'ընդունիմք զքեզ որպէս զուղղափառ կաթողիկոս. եւ թէ ոչ՝ զու զիտես»:

Իւր վերջին թղթին մէջ թէպէտ ճիշդ կ'ընէր Մելքիսեղեկ պաշտպանել Հայոց եկեղեցւոյ տեսակէտները նկատմամբ խնդրոյ առարկայ երեք կէտերու, բայց եւ այնպէս զուր բաց կը թողուր յետագայ բանակցութեանց համար: Պօղոս Ե. ի համառօտագրին պատասխանը կ'երեւայ թէ տուաւ 1622ին Գրիգոր Ժե. ին. կը յիշուի ուրիշ թուղթ մ'ալ 1623էն ուղղուած առ Ուրբանոս Ը.: Այս թղթակցութեանց համար մեր աղբյուրն է Վարդան արքեպ. Յունանեան, որ իւր համբաւաւոր թղթին մէջ, ուղղուած Եւզոկիացիներու, այսպէս կը գրէ²⁴. «Մելքիսեղեկ կաթողիկոս էջպէս կը գրէ 24. «Մելքիսեղեկ կաթողիկոս էջմիածնի յամի Տեսան 1622ին գրեաց առ Գրիգորիս Փափն Ժե. եւ յամի 1623ին առ Փափն Ուրբանոս Ը. զբաւանութիւն կաթողիկէի հաւատոյ, յայտնելով զհնազանդութիւն իւր սրբոյ եկեղեցւոյն Հոսմայ»:

Այս թղթակցութեանց շուրջը հետեւեալ խորհրդածութիւնները տեղի ունեցած են Տարածման Հաւատոյ Ս. Ժողովոյն ԻԲ. Նիստին մէջ զուժարուած 1623, Յունուար 10ին²⁵. «Հայոց կաթողիկոսի թղթերուն, որոնց մէջ կաթողիկէ եկեղեցւոյ հետ միութիւն կը խընդրէ, պէտք է պատասխանել յորդորական խօսքերով ի միութիւն հրաւիրելով: Պատասխանը ուղարկելու է Առաքեալներուն, յանձնելու համար կաթողիկոսին. բայց հրահանգ տալու է անոնց, որ նամակը յանձնելէ յամար թէ անոր զբաւ նամակները ճշմարտախօսութեան վրայ յեցած են. եթէ խօսակցութեան ընթացքին երեւան դայ, որ կեղծ են նամակները, պատասխանը պէտք չէ յանձնել. բայց կարող են, եթէ յարմար նկատեն, յորդորական խօսքերով զանիկա ի միութիւն հրաւիրել»:

Ս. Ժողովի կողմէն Մելքիսեղեկ կաթողիկոսին գրուած նամակին պատճենն է.

Առ կաթողիկոսն Հայոց Մելքիսեղեկ. Նորին Տէրութիւնը տեսաւ յօժարութեամբ զՏէր Յովհաննէս առաքելոյն Զուգայի, որ Ձեր կողմէ զրկուած էր առ Ս. Գահա. եւ լսեց հօգուոյ մեծագոյն ցաւակցութեամբ այն տառապանքներու եւ հարստահարութիւններու մասին, զորոնք Դուք եւ Ձեր ժողովուրդը կը կրէք անհաւատներէն. եւ կը

²⁴ Հ. Յ. Տաշեան, Յուլիան Միլիթ. Մատենադարան, էջ 111:
²⁵ Acta S. Congr. An. 1622—1625, t. 3.

ցաւի որ հեռաւորութեան պատճառաւ կարելի պիտի չըլլայ օգնել ձեզ եւ Զուգայի այն պարոններուն, որոնք զբաւ են նորին Սրբութեան, վերջապէս այն ամէն կաթողիկէ քրիստոնեաներուն, որոնք Ձեր կաթողիկոսութեան ներքեւ կը գտնուին, ինչ որ յօժարակամ տեղի պիտի ունենար ի մեծ բաւականութիւն իւր սրտին. որովհետեւ Նորին Սրբութիւնը ուրիշ նպատակ չունի, բայց եթէ օգնել թէ՛ հոգեւորապէս եւ թէ՛ նիւթապէս ուր կրնայ, ոչ միայն ամէն անոնց, որոնք այս Ս. Գահին հաւատացեալներն են, այլ եւ ամէն անոնց, որոնք չունենալով լաւ ուսուցիչներ, չեն հասած այն ճշմարտութեան, որ Պետրոս եւ Պաւլոս սուրբ առաքեալներէն յանձնուած է հոսմէական եկեղեցւոյ. եւ այսպէս զուրս են ճշմարիտ ճանապարհէն եւ կը խարխափին մոլորութեանց խաւարի մէջ: Ասոնց վրայ ցաւակցութիւն ունենալով Նորին Սրբութիւնը հաստատած է կարգինալներու ժողով մը, որ կը կոչուի Տարածման Հաւատոյ, անոր գործն է մասնաւոր հոգ տանել բոլոր ազգերու ամէն մասնաւոր պէտքերն Հայթհայթել: Եթէ Ձեր Սրբութիւնը լուրջ եւ կատարեալ միութեամբ մերձեցայ Հոսմէական եկեղեցւոյ, եւ գրէ անոր եւ ծանուցանէ Ձեր գաւառներու պէտքերը, պիտի տեսնէ այնուհետեւ անձին փորձով, թէ ըստ բաւականին պիտի գոհացուի Ձեր ժողովրդեան հոգեւոր պէտքերը, ինչպէս եղած է այս աշխարհի ուրիշ կողմերը: Այսպիսի խընդրոյ շուրջը կարող է Ձեր Սրբութիւնը լիապէս տեղեկութիւն ստանալ այն Դոմինիկեան Հայրերէն, որոնք Նախիջևան կը բնակին եւ պիտի տան Ձեզ ներկայս. անոնց ցոյց տուած ուղղութեան համաձայն գրեցէք առ Սուրբ Հայրն եւ առ Ս. Ժողովն: Առ այդ կը վստահացնեմ զՁեզ, թէ պիտի ընդունիք ամէն համեստ եւ պատշաճ բաւականութիւնը եւս:

Հոսմ, 4 Փետր. 1623:

Հակառակ այս յաճախակի թղթակցութեանց բանակցութիւնները չկրցան որոշ եղբակցութեան մը յանդիլ: Սուրբ ժողովը միշտ վերապահ մնաց Մելքիսեղեկի հանդէպ: Երկրին մէջ այնպէս ծանր էր կաթողիկոսութեան տնտեսական եւ բարոյական, նաեւ քաղաքական դրութիւնը, որ ի յատաճապունէ արդէն կարելի էր գուշակել ձեռնարկութեան ձախող ելքը: Մելքիսեղեկ, որ կը հեծէր պարտքերու տակ, կորսնցուցած էր ժողովրդեան վստահութիւնը: Եկեղեցականութեան

մեծ մասը ունէր իրեն թշնամի: Անկէ կացու-
թիւնը ստիպեց ի վերջոյ կաթողիկոսը, որ ա-
թուին իշխանութիւնը յանձնէ իւր եղբոր-
որդոյն՝ Սահակին եւ զազատագոյր փախուստի
դիմէ գէպի Եւրոպա:

1626ին, երբ Մելքիսեղեկ Լեւստան կը
գտնուէր եւ կը համբաւէր, թէ արդէն կաթո-
ղիկէ Եկեղեցւոյ հետ ի միութեան կը գտնուի,
տեղւոյն առաքելական Նուիրակին հարցման կը
պատասխանէր Ս. Ժորժը 1 Օգոստոս եւ
19 Սեպտ. թղթերով²⁶, թէ այդ միութիւնը
կերպակէս գեւ տեղի չէ ունեցած. եւ կը հրա-
հանգէր Նուիրակը, որ օգտագործելով կա-
թողիկոսին «միտութիւնն զէպի կաթողիկէ
Եկեղեցի» աշխատի իրագործել միութիւնը,
Եւզիմիոս Դ-ի սահմանած հրահանգներու
համաձայն: Մինչ այս վախճանեցաւ Մելքի-
սեղեկ ի Կամենից, 1627, Մարտ 18ին:

(Շարունակելի:)

Հ. Ն. ԱՎԻՆԵԱՆ



ԲԵԼԳԻԱ ԵՒ ՀՈՅԵՐԸ

Գ. ԳԼՈՒԽ

Առաջին խաչակրական արշաւանքը: Կի-
լիկիայի Կոստանդին իշխանի եւ այլոց ա-
ջակցութիւնը: Բելգիացի Բալդուին (կամ
Բոդուէն) իշխանի Եդեսիային եւ Փոքր Հայ-
քին տիրելը: Երուսաղէմի գրաւումն եւ Բել-
գիացի իշխան Գոդֆրուա դը Բուլլոնի (Gode-
froid de Bouillon) քաղաքումը:

ԺԱ. դարում երբ Պաղեստին Արաբներէ
տիրապետութեան տակ էր, սրանք համեմա-
տաբար ներողամտ վերաբերմունք էին ցոյց
տալիս քրիստոնէայ ուխտաւորներին, բայց
երբ 1076ին Սելջուկեան թուրքերն եկան, թէ
տեղական քրիստոնէաների եւ թէ եւրոպացի
ուխտաւորներէ կացութիւնը զգալի կերպով
վատթարացաւ: Բազմաթիւ ուխտաւորներ
գոհ զնացին իրենց հաւատքի ջերմեանդու-
թեանն եւ չվերադարձան, իսկ վերադարձող-
ները ողբազին կոչեր ուղղեցին քրիստոնէայ
աշխարհին՝ Ս. Երկիրը անհաւատներէ ձեռ-

²⁶ Propaganda, Lettere C. S., 1626, t. 5, f. 168
և. 202.

քից ազատելու: Եւրոպական երկիրները յու-
զուեցան այս անընդհատ բռնութիւններից եւ
նրան հետևող կոչերից: Կարելի է ասել, որ
Բելգիան ամենից աւելի վրդովուած երկիր-
ներից մին էր: Քրիստոնէական կրօնական
ուզին շատ ուժեղ էր այնտեղ: Բելգիան այդ
ժամանակ, ինչպէս ասում է համբաւաւոր
Բելգիացի պատմաբան Հ. Պիրէն, «վանքերի
երկիր» էր¹: Այս փոքր երկիրը մինչեւ այդ
օրը, մեծ թուով ուխտաւորներ գոհ էր տուել:
Դիւ յառաջ, այն է 1054ին, Կամբրէի եպիսկո-
պոսը Լիարէրտ 3000 Փլամանների ուղեկցու-
թեամբ ուխտի էր զնացել Երուսաղէմ եւ
նրանք շատ մեծ զրկանքներ էին կրել այն-
տեղ: Ուստի երբ Ուրբանոս Բ. պապը Կլէր-
մոնում հաւաքած համագումարից յետոյ հա-
մատարած խաչակրութիւնը քարոզուեց, Բել-
գիացիք ամենից աւելի ջերմ արձագանգ տուին
այդ քարոզին:

Բելգիական առաջին խաչակրական
խումբը հաւաքուեց Գան (Gand) քաղաքում,
առաջնորդութեամբ Գոդֆրուա դը Բուլլոն
(Godfroid de Bouillon) կոմսի եւ իր Բալդուին
կամ Բոդուէն (Baldwin = Baudouin) եւ Եւ-
ստաքիոս (Eustache) եղբայրների: Գոդֆրուա
ծախեց իր ամբողջ հօրենական կալուածքը,
հողալու համար իր եւ բազմաթիւ հետեւորդ-
ների ճանապարհածախքը: Իր օրինակին հե-
տեւեցան ուրիշ ազնուական Բելգիացիներ:
Անդլիայից էլ նաւերով կամաւորներ եկան
նրանց միացան: 1096 Օգոստոսին էր երբ ա-
ռաջին արշաւախումբը, 30,000 հետեւակ եւ
7000 ձիաւոր, մեկնեցաւ Բելգիայից: Նրանց
մէջ կային բացի Փլամաններից, այսինքն
բուն Բելգիացիներից, նաեւ Գաղղիացիներ,
Գերմանացիներ եւ Անդլիացիներ, սրանց բո-
լորի հրամանատարն էր Բելգիացի իշխանը
Գոդֆրուա դը Բուլլոն:

Երեք ուրիշ բանակ էլ Եւրոպայի այլեւայլ
կողմերից ճամբայ ելան, որոնց բոլորի միաց-
ման կէտը Կ. Պոլիսն էր, ուր հասան հազիւ
1097 Մայիսին, կտրելով եւրոպական ցա-
մաքը, Բաղդանեան թերակղզին: Որչափ էր
նրանց ընդհանուր գումարը: Կան պատմա-
գիրներ, որոնք հասցնում են 600,000ի, իսկ
ուրիշներ իջեցնում են մինչեւ 150,000ի: Ուր-
բանոս Բ.՝ խաչակրութեան բուն պետը հա-
շտել է 300,000 հետեւակ եւ 100,000 ձիա-

¹ Henri Pirenne, Histoire de la Belgique,
2^e édit. 1929, Bruxelles, էջ 91.

ւոր, որ ամենից հաւանականն է²: Սաչա-
կիրների նշանաբանն էր Dieu le veut:

Սաչակիրների առաջին դժուարութիւն-
ները սկսան Կ. Պոլիսում, Յոյների կողմից:
Յոյների եւ արեւմտեան քրիստոնէաների յա-
րաբերութիւնները լարուած էին արդէն կրօ-
նական հողի վրայ: Ժ. դարում, երբ Յունաց
պատրիարքը, Փոտիոս, բացարձակ իշխում էր
Կ. Պոլիսում, հիմնական անհամաձայնութիւն
էր ծագել երկու եկեղեցիների մէջ: Հոռոմ եւ
Կ. Պոլիս փոխադարձաբար բանադրանք էին
կարգում միմեանց: Այս դժուարութիւնը 1054ին
յանդեցաւ երկու եկեղեցիների յարաբերու-
թիւնների վերջնական խզման: Բայց այս հան-
գամանքը արդէլ չէր, որ Եւրոպացիք,
այսինքն հոռոմէական կաթողիկոսներ, շարունա-
կեն ընդհանրական կայսրութեան ճանապարհ-
ներով Երուսաղէմ երթեակի: Յոյները պէտք
ունէին Եւրոպացիներին: Երբ մահմետական
ցեղեր, արաբ եւ թուրք, հետզհետէ գրաւե-
ցին Փոքր Ասիայի այն մասերն, որոնք ըն-
դանդական իշխանութեան տակ էին, ընդհան-
րական կայսրը քանիցս զիմեց թէ Պապին եւ
թէ եւրոպական պետութիւններին, որ յանուն
քրիստոնէութեան օգնութեան դան իրեն:
Բայց այս զիմուհները նպատակաւ ընդունե-
լութիւն չգտան: Երբ խաչակրական արշա-
ւանքն սկսաւ, Յոյները յոյս տածեցին թէ
Եւրոպացիների շնորհիւ՝ իրենց իշխանութիւնը
կը վերականգնեն Փոքր Ասիայում: Բելգիա-
կան խումբը, Գոդֆրուայի հրամանատարու-
թեան տակ, առաջինն եղաւ Կ. Պոլիս հաս-
նողը: Ալէքսի կայսրը շատ ջանաց նրան հա-
մողելու, որ Սաչակիրների զբաւելիք տե-
ղերը վերստին ընդհանրական կայսրութեան
ենթարկուին, բայց Գոդֆրուա բացարձակա-
պէս մերժեց այդ պայմանը: Յոյների դժու-
հութիւնը մեծապէս աւելցաւ, երբ Սաչա-
կիրների այն խումբը, որ գտնուում էր համբա-
ւաւոր Պետրոս Անապատականի առաջնորդու-
թեան տակ, իրենց անցած տեղերում կողո-
պտոններ էին սարքում ու բռնութիւններ գործ
դնում ժողովրդի վրայ: Այնուամենայնիւ երբ
Սաչակրական բանակն առաջին պատերազմը
մղեց եւ թուրքերից գրաւեց Նիկիան, Սա-
չակիրներն այս քաղաքը, որ շատ մօտ էր
Կ. Պոլիսին, յանձնեցին Ալէքսի կայսրի:

Պաղեստին երթալու համար ամենալար-
մար ճանապարհը Փոքր Հայքն էր եւ մանա-

² Ernst Barker, The Crusades, Oxford 1925,
էջ 6:

ւանդ Կիլիկիան, որ կարեւոր դերք էր գրա-
ւում, Փոքր Ասիայ եւ Ասորիքի ճիշդ մէջը-
տեղը: «Փոքր Ասիայի հարաւարեւմտեան
մասում հայկական իշխանութիւններ կային,
որոնք զերծ էին մնացած Սելջուկեան թուր-
քերի ընդհանուր ջրհեղեղից եւ Սաչակիր-
ները յոյս ունէին թէ նրանցից իրական օգնու-
թիւն կը ստանան»³:

Կիլիկիայի հայկական պետութիւնը իր քա-
ղաքական եւ անտեսական զարգացման առա-
ջին շրջանումն էր: Ռուբէն իշխանին յաջոր-
դել էր Կոստանդին իշխանն, որ հետագայ
զենքի ոյժով Յոյների ձեռքից հայաբնակ վայ-
րեր գրաւելով միացնում էր իր իշխանու-
թեան: Սաչակիրները Փոքր Ասիայում արդէն
մեծ թուով քաղաքների եւ զիւղերի տիրել
էին եւ դիմում էին զէպի Անտիոք: Բայց
նրանք բոլորովին անձանթ էին այն տեղե-
րին, որտեղից պէտք է անցնէին: Ուստի Գոդ-
ֆրուա պատգամաւորներ ուղարկեց Կոստան-
դինին եւ խնդրեց, որ հայ ուղեցոյցներ ու-
ղարկէ իրեն: Բացի դրանից, որ աւելի կա-
րեւոր էր, նա խնդրել էր մի հայ զինուորա-
կան գունդ, որ տեղեակ լինէր ոչ միայն ճա-
նապարհներին այլ եւ թշնամիների ռազմական
զիրքերին եւ իրրեւ յառաջապահ ծառայէր
Սաչակիրներին, որպէս զի սրանք մահմետա-
կանների անակնկալ յարձակումներին չեն-
թարկուէին: Կոստանդին ամենայն սիրով կա-
տարեց նրանց խնդրքն, ուղարկեց թէ ուղե-
ցոյցներ եւ թէ հայկական ջոկատ, Սաչակիր-
ներին Տաւրոս լեռից անցընելու եւ Անտիոք
առաջնորդելու համար: Յատկապէս Գոդ-
ֆրուայի համար էլ մի շքեղ (richement orné ա-
տում է Բելգիացի պատմագիրը) վրան էր
նուիրել: Իրանով շրաւականանալով նա պա-
տուիրել էր իր զինակից հայ իշխաններին՝
Ապիլատ, Բաղունի, Գոդ վասիլ, Օշին եւ
այլն, ինչպէս նաեւ մերձակայ հայ վանքերին,
որ բոլոր հնարաւոր միջոցներով օգնեն Սա-
չակիրներին:

Անտիոքի պաշարումը շատ երկար տեւեց
եւ մեծ կորուստներ պատճառեց Սաչակիր-
ների բանակին: Սովոր մանաւանդ՝ շատ դո-
հեր էր տանում: Թուրքերն, որոնք 14 տարի
է տիրում էին քաղաքին, կռոււմ էին մոլեղ-
նօրէն: Նրանք այս կարճատեւ տիրապետու-
թեան ժամանակ այնքան հալածել ու ճնշել էին
քրիստոնէաներին (հայ, սիրիացի եւ այլն),

³ Ernst Barker, անդ, էջ 19: